


ԳԵՂԱՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԵՍԱՅԻ ՇԱՀԻՋԱՆՅԱՆ

Posted on March 30, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



1939-1987

Գրիշ Դավթյան, Գլենդել, Կալիֆորնիա

Եսայի Շահիջանյանը ծնվել է 1939 թվականի հունվարի 24ին, Նոր Ջուզայում, Իրան: Տարրական կրթությունը ստացել է տեղի պետականացված նախկին հայոց Կենտրոնական դպրոցում: Ավարտելուց հետո ընդունվում է Սպահանի Գեղարվեստից ուսումնարանի գեղարվեստական նկարչության բաժանմունքը, 13 տարեկանում, աշակերտելով ժամանակի պարսիկ հայտնի գեղանկարիչներ Ռոստամ Շիրազիին և Հաջ Մոսավար օլ Մուլքին: Նախքան այդ էլ նա սկսել էր տպագիր գեղանկարներից մատիտով ընդօրինակումներ անել, որոնցից երևում էին պատանու նկարչական հետաքրքրությունները և սերը: Ուսումնառության տարիներում նա ծանոթանում է Նորջուզայեցի, իրանահայ հայտնի գեղանկարիչ Երվանդ Նահապետյանի հետ, սկսում է այցելել նրա աշխատանոցը, երբեմնակի գեղանկարչական փորձեր անելով նրա մոտ, յուրացնում է վարպետի տարիների փորձառությունը:

Սպահանի Գեղարվեստից ուսումնարանը ավարտում է բարձր գնահատականով, ավելի կենտրոնացած գեղարվեստական մանրանկարչության վրա: Ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Լիբանան, բայց երկու տարուց հետո վերադառնում է Սպահան, Նոր Ջուզա, և արդեն որպես գեղանկարիչ աշխատանքի է մտնում Իրանի Մշակութային ժառանգությունը պահպանող պետական հիմնարկության մեջ: Գործուղվում է Իրանի պատմական պալատների որմանկարների վրա հին գեղանկարների նորոգման ու գույների թարմացման աշխատանքին: Վարպետանում է, ցուցաբերում է աննախադեպ հաջողություն. այնպես որ հիմնարկությունը նրան նշանակում է իտալական ԻՉՄԵՕ կազմակերպության որմանկարների նկարիչների խմբի հետ՝ աշխատելու Պրոֆեսոր Ռոբերտո Չերբինոնի հետ, որն այդ օրերում Իրանում ղեկավարում էր ԻՉՄԵՕ-ն:



Եսայի Շահիջանեան «Բոլորան գիւղ»

ԱՐՄԵՆԻԱԿԱՆ ԳԵՂԱՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԵՍԱՅԻ ՇԱՀԻՋԱՆՅԱՆ

Եսայի Շահիջանյանը աշխատում, վերականգնում և թարմացնում է Սպահան քաղաքի՝ Ալիդափու, Չեհել Սոթուն, Հաշթ Բեհեշտ պալատների, Նոր Ջուղայի մի քանի եկեղեցիների, Նահին քաղաքի՝ Փիրնիա տան, Շիրազ քաղաքի՝ Ղավամ Նարինջստանի, և Ղազվին քաղաքի պատմական կոթողների որմնանկարները: Պատմական կոթողների որմնանկարների վրա աշխատանքի ընթացքում նա նաև ուսումնասիրում է դրանց ձեվավորման գեղանկարչական ոճը, գույների համադրության ճաշակը և կիրառված փորագրումների ու քանդակների յուրահատկությունները: Նա դարձավ պարսից Սաֆավիյան և Ղաջարական հարստությունների (դինաստիաների) նկարչության ճանաչված հեղինակություն: Նա վերականգնեց Սաֆավիյան պատմաշրջանի նկարչական ոճը, որով նա գեղազարդեց Սպահանի Աբբասյան հյուրանոցի սրահները, մայրաքաղաք Թեհրանի Քոսար հյուրանոցը, պատվերով ստեղծագործեց Նյու Յորքի՝ Վալդորֆ և Աստորիա հյուրանոցների գեղանկարված պաստառները: Ղաջարական հարստության ծաղիկների ու թռչունների նրա վերականգնած և իրագործած

Գեղանկարները հիացմունքով համարվում են տվյալ ոճի բնորոշեր: Իտալական ԻՉՄԵՕ կազմակերպությունը նրան պարգևատրում է մասնագիտական վկայական, իսկ նրա դպրոցը՝ Սպահանի Գեղարվեստից ուսումնարանը՝ Պրոֆեսորի կարգ ու կոչում է շնորհում նրան:

Եսայի Շահիջանյանը հեղինակային նորույթ մտցրեց իրանական մանրանկարչության մեջ: Մանրանկարչությունը տափակ նկարչություն է, ներկայանում է հարթ տարածքով, չունի խորք: Նա խորք ստեղծեց տափակ մանրանկարչության մեջ, որ իրանական դարավոր նկարչական գեղարվեստում հսկայական պատմական նորույթ եղավ:

Ամուսնացավ ու բախտավորվեց երկու զավակներով՝ աղջիկ ու տղա:

Այդ տարիներում, իր աշխատանքի շրջանակում, նա ծանոթանում ու մտերմանում է, հրանում գտնվող հռչակավոր արեվելագետ Արթուր Պոպի հետ, որ դառնում է նրա գեղարվեստի և իրագործումների հիացողներից մեկը:

Տարիների աշխատանքների ավանդությամբ հարուստ ու հռչակված, նա իր սեփական գեղանկարչական գործին զուգահեռ վերադառնում է իր սիրելի Սպահանի Գեղարվեստից ուսումնարանը, որպես պրոֆեսոր, սովորեցնելու իր կախարդական գեղարվեստը երիտասարդ սկսնակներին: Մանրանկարչություն է ուսուցանում նաև Սպահանի Պարդիս համալսարանում:

Նոր Ջուղայի ազգային և հասարակական կյանքում նա ներկա էր իր գեղարվեստով: Պարմանությունից նա անդամակցել է Հայ Հեղափոխական Դաշնակցությանը, սկսյալ պատանեկան խմբերից: Նա իր մի գեղանկար ստեղծագործությունը նվիրում է Նոր Ջուղայի Հայ Դատի հանձնախմբին, որ վիճակահանությամբ գումար է ապահովում նույն հանձնախմբին:

Եսայի Շահիջանյանի բազմաթիվ գեղամանրանկարչական ստեղծագործությունները սփռված են բազմաթիվ վայրերում: Սպահան և Նոր Ջուղա այցելող ամերիկացիներ և եվրոպացիներ այցելում էին և գնում: Այնպես որ ցրիվ են բազմաթիվ անհատական հավաքողների մոտ: Նրա արժանավոր կողակիցը՝ Ստեփան, մինչև վերջերս էլ նկարահանոթեսներ էր կազմակերպում սփյուռքից՝ հայրենիք: Այնուամենայնիվ Եսայի Շահիջանյանի ստեղծագործական ժառանգությունը ավելի ճանաչված է իրանական հասարակության տարածքում:



Սպահան՝ Եսայի Շահիջանեանի կիսանդրին

Ավաղ, պատմական կոթողների որմանկարների նորոգումները դարձան ճակատագրական: Գաճով սվաղված հին պատերի քերումների անսկատ փոշին և գույների թարմացումները նրան վարակեցին թոքերի քաղցկեղով, որը անգթորեն խզեց Եսայու դեռ երիտասարդ կյանքը 1987 թվականի դեկտեմբերի 19ին. ընդամենը 48 տարեկան հասակում, նա մահացավ Նոր Ջուղայում: Բազմահազար ժողովուրդ սգաց նրա մահը: Ծովածավալ հուղարկավորությունը քայլեց Նոր Ջուղայից մինչեւ Հայոց գերեզմանատունը, հանգստարանը: Նրա աշակերտները ուսամբարձ տարան իրենց սիրելի վարպետի դագաղը: Իրանի գեղարվեստից նախարարը դամբանական խոսեց. գնահատեց Եսայուն, որպես այն մեծագույն գեղամանրանկարիչը, որ ամենախորքային ոճը զարգացրեց իրանական գեղամանրանկարչության մեջ, վերջին

Երեք հարյուրամյակի ընթացքում: Դամբանական խոսեց Նոր Ջուղայի մեծ բանասեր և պատմաբան Լևոն Գ. Մինասյանը և ուրիշներ: Գլենդելում նրա եղբայրները և հարազատներս, հոգեհանգիստ կատարեցինք ու սուգ արինք:

Իրանի Գեղարվեստագետների խորհուրդը Եսայի Շահիջանյանի գեղանկարչական ստեղծագործությունների ժառանգությունը ուսումնասիրելով, ետ մասնագիտական քննարկման, նրան ճանաչեց իբրև առաջնակարգ գեղարվեստագետ, ետ մահու նրան պարգևեց Գեղարվեստի Դոկտորայի տիտղոսով:

Դոկտոր-Պրոֆեսոր Եսայի Շահիջանյանի կիսանդրին զետեղված է Սպահանի Գեղարվեստից ուսումնարանի պարտեզի Վարպետների ճեմելիքում, որտեղ նա իր պատվանդանից հսկում է հասակ առնող գեղանկարիչներին:

Ես ու Եսային հորեղբոր զավակներ ենք. ես՝ թոռ, Եսային՝ ծոռ հարաբերակցությամբ: Մեր գերդաստանի մոտավոր տարեկից տղաներ խմբով, ընկերներ, հարազատներ էինք. դե՛, տարիքիս բերումով նրանց մեծություն էի անում: Ինչ խոսք, երբեմն էլ ապտակով պատժում: Վերջին անգամ հանդիպեցինք 1985 թվականին, ընտանիքով Նոր Ջուղա էինք գնացել: Հյուր եղանք նրա տանը, ապա միասին ընտանիքներով մեր ավտոներով, գնացինք Նոր Ջուղայի Փերիա գավառի մեր տոհմական Բոլորան գյուղի մեր պապենական խրճիթը: Պատմեցի նրան, որ ընտանիքով գաղթելու եմ Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Տրտմությամբ ամպեց. ասաց, որ ինքը ընտանիքով կներգաղթի հայրենիք: Այն ժամանակներում Խորհրդային Միության հյուպատոսարանի խորհրդահայ հյուպատոսը մերժել էր իմ դիմումը հայրենիք այցելելու:

There are no comments yet.